



ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան
24.05.2016թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 50/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Դյուրլանգ» ՍՊԸ-ի 05.05.2016թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-50/16 բողոք) և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության 18.05.2016թ. թիվ ԴՎԱ/1328 գրությունը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 25.05.2016թ. թիվ 1/6-1/16254-16 գրությունը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-2/3» ծածկագրով ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը և ԳԲԽ-50/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) 23.05.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1.«Դյուրլանգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Դյուրլանգ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 05.05.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից շինանյութի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-2/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝

Ընթացակարգ), և Ընթացակարգի 3-րդ չափաբաժնով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից: Ընկերությունից պահանջվել է ներկայացնել Ընթացակարգի երկրորդ փուլին վերաբերող փաստաթղթերը, որոնք և Ընկերությունը սահմանված ժամկետում ներկայացրել է: Պատվիրատուն, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի 168-Ն որոշման (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները, սահմանված կարգով տվյալների ճշտման մասին ՀՀ ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացրել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև Կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.04.2016թ. ներկայացված եզրակացության համաձայն՝ «Դյուրլանգ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունները գերազանցում են ակտիվների հաշվեկշռային արժեքը, ինչի հիման վրա էլ Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի 26.04.2016թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է: Ընկերությունը 04.05.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին ներկայացված ահազանգով տեղեկացրել է, որ 2015թ. շահութահարկի հաշվետվության 6-րդ աղյուսակում տեղի է ունեցել մեխանիկական սխալ, որի արդյունքում «Դյուրլանգ» ՍՊԸ-ի պարտավորությունները գերազանցել են ակտիվների հաշվեկշռային արժեքը, որից հետո Պատվիրատուն 18.04.2016թ. հարցում է կատարել ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ տվյալների ճշտման մասին, և արդյունքում ստացվել է, որ «Դյուրլանգ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում, պարտավորությունների հաշվեկշռային արժեքը գերազանցել է ակտիվների հաշվեկշռային արժեքը: Այնուհետև, Ընկերությունը 02.05.2016թ. Մաշտոցի հարկային տեսչություն է ներկայացրել շահութահարկի հաշվետվության ուղղված, ճշգրիտ տարբերակը, որի համաձայն՝ Ընկերության պարտավորությունները չեն գերազանցում ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Ընկերությունը բողոքի շրջանակներում ներկայացրել է հարկային տեսչությանը ներկայացված 2015թ.-ի շահութահարկի ուղղված հաշվետվությունը, որում «Դյուրլանգ» ՍՊԸ-ի պարտավորությունները չեն գերազանցում ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Ընկերությունը դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով կատարել կրկնակի հարցում՝ մատնանշելով, որ տեղի է ունեցել մեխանիկական սխալ, որից հետո կատարվել է ուղղում, սակայն Պատվիրատուն հրաժարվել է կատարել պահանջվող հարցումը՝ ճշտելու ընկերության իրական, ճիշտ տվյալները՝ պատճառաբանելով, որ ՀՀ գնումների օրենսդրությամբ կրկնակի հարցման հնարավորություն նախատեսված չէ:

Ընկերությունը, բողոքում մեջբերելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջը, նշել է, որ Ընկերությունն ունի հրավերով սահմանված գնումներին մասնակցելու իրավունքը և համապատասխանում է որակավորման չափանիշներին, ինչպես նաև ներկայացված պահանջներին համապատասխան ներկայացվել են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

Տվյալ դեպքում, գնահատող հանձնաժողովն, օգտվելով իրեն վերապահված հայեցողական իրավունքից, դրսևորել է խտրական վերաբերմունք Ընկերության նկատմամբ՝ սխալ գնահատելով ներկայացված փաստաթղթի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին՝ կայացրել է անօրինական որոշում, անտեսելով այն փաստը, որ Ընկերության պարտավորությունների և ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը համապատասխանում է հրավերի պայմաններին, ինչի ուժով բացակայում է Ընկերության հայտը մերժելու հիմքը:

- Ընկերությունը, մեջբերելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետը, խնդրել է.

1. կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-2/3» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից պայմանագրի կնքման գործընթացը:

2. դադարեցնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-2/3» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կայացրած որոշումը՝ «Դյուրլանգ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 12.05.2016թ. ժամը 17:00-ին ԳԲԽ-50/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Դյուրլանգ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները հայտնեցին, որ Ընկերության հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը, խնդիրն առաջացել է այն պատճառով, որ 2015թ. շահութահարկի հաշվետվության 6-րդ աղյուսակում տեղի է ունեցել մեխանիկական սխալ:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) «Դյուրլանգ» ՍՊԸ-ի 05.05.2016թ. բողոքի վերաբերյալ 18.05.2016թ. թիվ ԴՎԱ/1328 գրությամբ Կենտրոն է ներկայացրել գրավոր կարծիք և Ընթացակարգին վերաբերող բոլոր անհարժեշտ փաստաթղթերի պատճենները:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո սահմանված կարգով ՀՀ ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացվել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև Կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

- ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.04.2016թ. ներկայացված Կարգի 48-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն՝ «Դյուրլանգ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունները գերազանցում են ակտիվների հաշվեկշռային արժեքը, ինչի հիման վրա էլ Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի 26.04.2016թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն նշել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները իրավաչափ են և մասնակցի հայտը մերժելու ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմքերը առկա են:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ50/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի մասին, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ԳԲԽ-50/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 23.05.2016թ. եզրակացությունը և առաջարկել՝ «Դյուրլանգ» ՍՊԸ-ի 05.05.2016թ. ներկայացրած բողոքը մերժել:

5. ԳԲԽ-50/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-50/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար շինանյութի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-2/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետև նաև՝ Ընթացակարգ)՝ 88 չափաբաժիններով ():

2. «Դյուրլանգ» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար անհրաժեշտ շինանյութի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-2/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում

կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով **18.03.2016թ.** հայտ է ներկայացրել:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար շինանյութի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-2/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի 2.3 կետի համաձայն՝

«Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական փորձառություն,

2) տեխնիկական միջոցներ,

3) ֆինանսական միջոցներ,

4) աշխատանքային ռեսուրսներ:

Ընդ որում Մասնակցի՝

(...)

«Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Հայաստանի Հանրապետության ղեզդիդենտ հանդիսացող Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (**Հավելված 3.3**) այն մասին, որ հայտը ներկայացվելուն նախորդող՝

(...)

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

(...)

Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

(...)

4. «Դյուրլանգ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով 18.03.2016թ. ներկայացրած հայտի N 3.3 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ **հայտը ներկայացնելուն նախորդող**

հաշվեփուլ տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

5. Պատվիրատուն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 18.04.2016թ. կատարված հարցմամբ խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Դյուրլանգ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

6. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.04.2016թ. Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ **«Դյուրլանգ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող հաշվեփուլ տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը կազմում է՝ 157,687,993 ՀՀ դրամ, իսկ ակտիվների հաշվեկշռային արժեքը՝ 149,908,427 ՀՀ դրամ:**

7. «ԳԱԿ-ՇՀԱՊԶԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊԶԲ-2/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև նաև՝ Գնահատող հանձնաժողով) կողմից 26.04.2016թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ հանձնաժողովը մերժել է «Դյուրլանգ» ՍՊԸ-ի հայտը՝ հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցելու հիմնավորմամբ:

8. Ընկերությունը 02.05.2016թ. Մաշտոցի հարկայի տեսչություն է ներկայացրել շահութահարկի հաշվետվության ուղղված, ճշգրիտ տարբերակը, որի համաձայն՝ Ընկերության ընդամենը ակտիվները կազմել են **152,391,602 ՀՀ դրամ**, ընդամենը պարտավորությունները՝ **149,089,766 ՀՀ դրամ:**

9. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 16.05.2016թ. թիվ 01/04.1/1875-16 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին՝ խնդրելով հայտնել, թե ինչքան է կազմում «Դյուրլանգ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների և ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Սույն եզրակացությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացնելու օրվա դրությամբ՝ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից չի ստացվել Կենտրոնի 16.05.2016թ. թիվ 01/04.1/1875-16 գրությանն ի պատասխան ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի համապատասխան պատասխանը:

6. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Դյուրլանգ» ՍՊԸ-ի 05.05.2015թ. ներկայացրած բողոքը, ՀՀ պաշտպանության նախարարության 18.05.2016թ. թիվ ԴՎԱ/1328 գրությունը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 25.05.2016թ. թիվ 1/6-1/16254-16 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի *ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ , վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Սույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

(...)

բ. հաշվեքուր փարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

(...)

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 26.04.2016թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ հանձնաժողովը մերժել է «Դյուրլանգ» ՍՊԸ-ի հայտը՝ **հայտը ներկայացվելուն նախորդող հաշվեքուր փարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցելու հիմնավորմամբ:**

Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 18.04.2016թ. կատարված հարցմամբ խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Դյուրլանգ» ՍՊԸ-ի վերաբերյալ, որին ի պատասխան՝ 21.04.2016թ. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացվել է եզրակացություն, համաձայն որի՝ «Դյուրլանգ» **ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն (18.03.2016թ.) նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը գերազանցել է ակտիվների հաշվեկշռային արժեքը:**

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացությունը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 26.04.2016թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1-րդ կետով կայացված որոշմամբ «Դյուրլանգ» ՍՊԸ-ի հայտը մերժել է՝ պատճառաբանելով, որ Ընկերության կողմից հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը գերազանցել է ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Ընկերությունը ներկայացված բողոքով նշել է, որ ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացությունը չի համապատասխանում իրականությանը, քանի որ 2015թ. շահութահարկի հաշվետվության 6-րդ աղյուսակում տեղի է ունեցել մեխանիկական սխալ, ինչի արդյունքում, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրվել է հրավերի պայմաններին չհամապատասխանելու մասին եզրակացություն: Ընկերությունը ներկայացված բողոքի շրջանակներում ներկայացրել է 02.05.2016թ. Մաշտոցի հարկայի տեսչությանը ներկայացրած շահութահարկի հաշվետվության ուղղված, ճշգրիտ տարբերակը, որի համաձայն՝ Ընկերության ընդամենը ակտիվները կազմել են 152,391,602 **ՀՀ դրամ**, ընդամենը պարտավորությունները՝ 149,089,766 **ՀՀ դրամ**:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 16.05.2016թ. թիվ 01/04.1/1875-16 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին՝ խնդրելով հայտնել, թե ինչքան է կազմում «Դյուրլանգ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացվելուն

նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների և ակտիվների հաշվեկշռային արժեքը, որին ի պատասխան՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 25.05.2016թ. 1/6-1/16254-16 գրությամբ հայտնել է, «Դյուրլանգ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա (2015թ.) ընթացքում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը կազմում է **152,391,602 ՀՀ դրամ**, պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը՝ **149,089,766 ՀՀ դրամ** (տվյալները փոխվել են 02.05.2016թ. ճշտված հաշվարկի հիման վրա):

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 25.05.2016թ. 1/6-1/16254-16 գրության համաձայն, «Դյուրլանգ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա (2015թ.) ընթացքում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը կազմում է **152,391,602 ՀՀ դրամ**, պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը՝ **149,089,766 ՀՀ դրամ**: Այսինքն, Ընկերության «Ֆինանսական միջոցներ» չափանիշը հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա մասով բավարարում է հրավերի պահանջներին, հետևաբար Խորհուրդը գտնում է, որ Ընկերության բողոքը այս հիմքով ենթակա է բավարարման:

Հաշվի առնելով, որ Ընկերության հայտի՝ հրավերի «Ֆինանսական միջոցներ» չափանիշը համապատասխանում է հրավերի պահանջներին, Խորհուրդը գտնում է, որ «Դյուրլանգ» ՍՊԸ-ի հայտի՝ հրավերի պահանջներին չհամապատասխանելու մասին որոշումը դադարեցնելու պահանջը նույնպես ենթակա է բավարարման:

Նկատի ունենալով, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.04.2016թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Դյուրլանգ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը ենթակա է դադարեցման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Դյուրլանգ» ՍՊԸ-ի 05.05.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել.

դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար անհրաժեշտ շինանյութի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-2/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.04.2016թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1-րդ կետով կայացված «Դյուրլանգ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝

Անդամ՝

Հայկ Կարապետյան

Մարտիկ Նալբանդյան